ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշատի 1

№ 4771-Ա «09» դեկտեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N 7149-Ա, 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 6654-Ա, 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 3405-Ա, 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 3243-Ա, 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 1148-Ա, 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի N 771-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով, 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի նոյեմբերի 21-ի N 2822-Ա հրամանը.

1.Հաստատել՝

1) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետի տեղակալի (ծածկագիր՝ 1.3-86) (հավելված 1),

2) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսաապահովման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-735) (հավելված 2)

3) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության զանգերի սպասարկման և աջակցման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-736) (հավելված 3)

4) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության զանգերի սպասարկման և աջակցման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 2.3-737) (հավելված 4)

5) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կենսաապահովման բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-680) (հավելված 5)

6) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության արխիվային գործի վարման բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-681) (հավելված 6).

7) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.1-682) (հավելված 7).

8) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.1-683) (հավելված 8).

9) Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ընդհանուր բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-684) (հավելված 9).

10) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության արխիվային գործի վարման բաժնի առաջին կարգի մասնագետի (ծածկագիր՝ 3.2-727) (հավելված 10) պաշտոնների անձնագրերը:

2. Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 7149-Ա որոշման 1-ին կետի՝

1) 1.13-րդ ենթակետով հաստատված 115-րդ և 116-րդ հավելվածների (ծածկագրեր՝ 2.3-32, 2.3-33) «1.3.» կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի պետը կամ բաժնի մյուս գլխավոր մասնագետներից մեկը կամ բաժնի առաջատար մասնագետներից մեկը:».

2) 1.38-րդ ենթակետով հաստատված 1153-րդ (ծածկագիր՝ 2.1-127) և 1154-րդ (ծածկագիր՝ 2.3-254) հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 11-ի և հավելված 12-ի:

3. Երևանի քաղաքապետի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մի շարք պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 6654-Ա որոշման 1-ին կետով հաստատված N 8 հավելվածի (ծածկագիր՝ 3.2-548) «1.3.» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Բաժնի առաջին կարգի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի առաջատար մասնագետներից մեկը կամ բաժնի մյուս առաջին կարգի մասնագետը կամ բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:»:

4. Երևանի քաղաքապետի 2019 թվականի սեպտեմբերի 20-ի «Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի հ. 7149-Ա, 2011 թվականի ապրիլի 21-ի հ. 1468-Ա, 2013 թվականի դեկտեմբերի 3-ի հ. 6133-Ա, 2017 թվականի հուլիսի 11-ի հ. 2359-Ա որոշումներով հաստատված հավելվածներն ուժը կորցրած ճանաչելու և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 3405-Ա որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետով հաստատված՝

1) N 14 հավելվածի (ծածկագիր՝ 3.1-438) «1.3.» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Բաժնի առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի մյուս առաջատար մասնագետը կամ բաժնի գլխավոր մասնագետներից մեկը կամ բաժնի առաջին կարգի մասնագետներից մեկը:».

2) N 17 հավելվածի (ծածկագիր՝ 3.2-566) «1.3.» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Բաժնի առաջին կարգի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի առաջատար մասնագետներից մեկը կամ բաժնի մյուս առաջին կարգի մասնագետը կամ բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:»:

5. Երևանի քաղաքապետի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի «Երևանի քաղաքապետի 2021 թվականի մայիսի 26-ի հ.1712-Ա, 2021 թվականի մայիսի 26-ի հ.1713-Ա, 2021 թվականի մայիսի 26-ի հ.1674-Ա և 2022 թվականի հունվարի 25-ի հ.257-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 3243-Ա որոշման 1-ին կետով հաստատված՝

1) 23-րդ հավելվածի (ծածկագիր՝ 2.3-664) «1.3.» կետի «բաժնի պետը» բառերից հետո լրացնել «կամ բաժնի առաջատար մասնագետը» բառերը.

2) 63-րդ և 64-րդ հավելվածների (ծածկագրեր՝ 3.2-688, 3.2-689) «1.3.» կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«Բաժնի առաջին կարգի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է բաժնի գլխավոր մասնագետ-գլխավոր արխիվագետը կամ բաժնի առաջատար մասնագետը կամ բաժնի առաջին կարգի մասնագետներից մեկը:»:

6. Երևանի քաղաքապետի 2023 թվականի մայիսի 16-ի «Երևանի քաղաքապետի 2022 թվականի սեպտեմբերի 12-ի N 3243-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 1148-Ա որոշման 1-ին կետով հաստատված 5-րդ և 6-րդ հավելվածների (ծածկագրեր՝ 2.3-697, 2.3-698) «1.3.» կետերի «կամ բաժնի մյուս գլխավոր մասնագետը» բառերը փոխարինել «կամ բաժնի գլխավոր մասնագետներից մեկը » բառերով:

7. Երևանի քաղաքապետի 2024 թվականի փետրվարի 29-ի «Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի հ.7149-Ա, 2011 թվականի մայիսի 19-ի հ.1967-Ա, 2011 թվականի հունիսի 29-ի հ.2809-Ա, 2012 թվականի դեկտեմբերի 24-ի հ.8006-Ա, 2017 թվականի հուլիսի 11-ի հ.2359-Ա, 2019 թվականի մարտի 20-ի հ.780-Ա, 2019 թվականի սեպտեմբերի 20-ի հ.3405-Ա, 2020 թվականի օգոստոսի 25-ի հ.2593-Ա, 2021 թվականի մայիսի 21-ի հ.1644-Ա, 2021 թվականի մայիսի 24-ի հ.1658-Ա, 2022 թվականի փետրվարի 4-ի հ.336-Ա, 2022 թվականի հունիսի 6-ի հ.2026-Ա, 2022 թվականի սեպտեմբերի 12-ի հ.3243-Ա, 2023 թվականի հուլիսի 4-ի հ.1923-Ա, 2023 թվականի հուլիսի 13-ի հ.2067-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 771-Ա որոշման 1-ին կետով հաստատված՝

1) 2-րդ հավելվածի (ծածկագիր՝ 1.2-53) «1.3.» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ վարչության գլխավոր մասնագետը».

2) 18-րդ հավելվածի (ծածկագիր՝ 2.2-137) «1.3.» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Վարչության գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության պետը կամ վարչության պետի տեղակալը կամ վարչության առաջատար մասնագետը».

3) 33-րդ հավելվածի (ծածկագիր՝ 2.3-714) «1.3.» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Վարչության առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության գլխավոր մասնագետը կամ վարչության առաջին կարգի մասնագետներից մեկը»:

8. Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2024 թվականի փետրվարի 29-ի «Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի հ.7149-Ա, 2011 թվականի մայիսի 19-ի հ.1967-Ա, 2011 թվականի հունիսի 29-ի հ.2809-Ա, 2012 թվականի դեկտեմբերի 24-ի հ.8006-Ա, 2017 թվականի հուլիսի 11-ի հ.2359-Ա, 2019 թվականի մարտի 20-ի հ.780-Ա, 2019 թվականի սեպտեմբերի 20-ի հ.3405-Ա, 2020 թվականի օգոստոսի 25-ի հ.2593-Ա, 2021 թվականի մայիսի 21-ի հ.1644-Ա, 2021 թվականի մայիսի 24-ի հ.1658-Ա, 2022 թվականի փետրվարի 4-ի հ.336-Ա, 2022 թվականի հունիսի 6-ի հ.2026-Ա, 2022 թվականի սեպտեմբերի 12-ի հ.3243-Ա, 2023 թվականի հուլիսի 4-ի հ.1923-Ա, 2023 թվականի հուլիսի 13-ի հ.2067-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 771-Ա որոշման 17-րդ (ծածկագիր՝ 2.2-136) և 19-րդ (ծածկագիր՝ 2.2-138) հավելվածները:

9. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ